

Վարձ պահպանութեան տոմսակաց Դպրանոցի.	1470		
Ծախը պահպանութեան տան Դպրա. ի հըրկի- դութենէ . . . . .	6177	57647	
Գումար տարեկան ծախուց	18437	32	
Սնացորդ ի տարեւորական արգեանց և ծախուց, որ ըստ կարգաւորութեան խորհրդոյ Հոգաբար- ձուաց ի 29 Յունու արի 1891 ամի որոշեալ է գործածել ի կառուցումն նորոյ շինուածոյ . . . .	12533	38	
Գումար . . . . .	—	—	30970
			70

## ՊՈ.ՏՐԻՈ.Բ.Բ.ԱԿՈ.Ն ԿՈՒԴՈՒԿ.

Անցեալ տարուայ նոյեմբերի 20-ին կ. Պղմում և բոլոր տաճկա-  
կան գաւառների ամեն հայ եկեղեցիներում կարգացուել է խորէն  
Աշրջեան Ամենապատիւ Պատրիարքի՝ իւր տեսակին մէջ նշանաւոր  
կոնդակը, որն և արտատպումենք ամբողջութեամբ:

Խօրէն ՇԱՄԱՅՑ ՅԻՍՈՒՍԽ ՔՐԻՍՏՈՒ ԵՒ ՇՆՈՐՀԱՒ ՍՈՒՐԲ ՀՈԳ-  
ԻՈՅՆ ՊԱՏՐԻՈ.Բ.Բ. ՊՈԼՍՈՅ ԵՒ ՎԵՐԱՏԵՍՈՒՀ ԱՄԵՆԱՅՑՆ ՎԻՃԱ-  
ԿԱՅ Ս. ԵԿԵՂԵՑԵԱՅ ԱՍՏՈՒԹՈՅ ՈՐ Ի ՄԱՅՐԱԳԵՂԱԳԻՍ ԵՒ  
ԱՄԵՆԱՅՑՆ ՀԱՅԱԲՆԱԿ ԳԵՒԾՈՍ ՕՍՄ. ՊԵՏՈՒԹԵԱՆ, ԳԵՐ. Ա.  
Եպիսկոպոսաց, բարեխնամ առաջնորդաց և վանահարց, Պատրիարքական  
և առաջնորդական փախանորդաց, բարեխրատ քարոզչաց, մաքրակենցաղ  
աւագերիցանց, բարեկրօն քահանայից, շնորհունակ սարկաւագաց, քաղց-  
րանուագ գպրաց, բարեխնախնան դաստիարակաց, բարեջան հոգաբարձու-  
թեանց և Թաղ. Խորհրդոց, աստուածասէր վաճառականաց, բարեպաշտօն  
արհեստաւորաց, արանց և կանանց, ծերոց և տղայոց, երիտասարդաց և  
կուսանաց, մեծաց և փոքրունց և այլ ամենայն չափուհասակի ի Քրիստոս  
Յիսուս ի Տէր մեր հաւատացեալ որդւոց մօրս լուսոյ Կաթողիկէ և առա-  
քելական Ա. Եկեղեցոյս Հայաստանեայց՝ ողջոյն քրիստոսաւանդ սիրոյ և  
օրհնութիւն աստուածային՝ կալ մնալ միշտ պաշտպանեալ ընդ հովանեաւ  
և ամենախնամ աջոյն բարձրելոյ Հօր, քրիստոնավայել կենօք սրբութեան,  
պարկեշտ և զգաստ կենցաղավարութեամբ գնալով յօրէնս և ի պատուիրանս  
Տեառն մինչեւ ի կէտ կոչման. ամէն:

Ընդ քրիստոսաւանդ ողջունիս և օրհնութեանս, գիտութիւն լիցի ձեզ  
սիրելի որդեակը իմ ի Քրիստոս թէ՝

Մեր ազգն և եկեղեցին դարաւոր արկածից յեղաշրջութեանց ներքեանընդհատ ժամանակաւ յանչնարինս տառապելէ յետոյ՝ նախախնամութիւն Աստուածային իւր երկրպագելի ողորմութեան և զմութեան շնորհիւ հաճեցաւ պահպանել զայն և յանդորր հանել ընդ հզօր պաշտպանութեամբ տիեզերակալ թագաւորութեան մեծի Տանն Օսմանայ. Մեծն աշխարհակալ և տիեզերայազի՛ որ ի ձեռաց նախախնամութեան աւանդընկալաւ այս վշտաչարչար ժողովուրդ՝ զսա խնամով պահելու և մշակելու համար համարձակութիւն պարգևեց նմա և արտօնեց որ պաշտէ իւր կրօնքը, վարուի իւր ծիսովը, գործադէ իւր լեզուն. ի մի բան՝ ազգային նկարագրի յատկութիւն անփոփոխ պահելու և զարգանալու բարի բարի միջոցները համարձակ գործադրէ. Եւ որպէս զի այս արտօնած շնորհըներն արդիւնաւոր կերպիւ ի գործ դրուին՝ հրամայուելով ի ձեռն հոգեօր իշխանութեան, ազգին պատրիարքութիւնը՝ որ ազգին հոգեօր և կրօնական կեանքին անընդմիջական վերակացութիւնն է, իւր հովանաւորութեան ներքեաւ առաւ և հաստատեց, ընդարձակածաւալ պետութեան այլ և այլ կողմեր տարածեալ և սփռեալ ժողովուրդն հայոց ժողովեց այս հոգեօր իշխանութեան գաւաղանի ներքեաւ բաշխեց այս իշխանութեան վարչութեան մը պատշաճեալ բոլոր սեպհականութիւնը, հրամայեց զսա միայն ձանաչել գլուխ և պատասխանատու ի վերայ համօրէն հոգեօրականաց և աշխարհականաց հայ ազգին, և հաճեցաւ ի փոխարէն իւր չնաշխարհիկ և վեհանձն ողորմութեան՝ ի ձեռն այս հոգեօր իշխանութեան՝ ընդունիլ հնաղանդութեան, հպատակութեան և հաւատարիմ ծառայութեան շնորհապարտ ընծայաբերութիւն ի կողմանէ ազգին:

Հայ ազգն անշուշտ ի վաղուց ժամանակաց անտի ընդ անկշռելի շնորհս Օսմանեան պետութեան երախտագիտութեամբ դարմացեալ հպատակութեան և հաւատարմութեան պարտուց հատուցման հետ գոհութեամբ և ուրախութեամբ սրտի կաղօթէ միշտ առ Աստուած վասն յաջողութեան և խաղաղութեան աշխարհին և վասն անասան պահպանման օսմանեան պառապանձ գահուն:

Պատմական և գրական այնքան ապացոյցներու առջեւ սիրելիք՝ որք կը հաստատեն մէկ կողմանէ այս բարեխնամ թագաւորութեան բազմապատիկ շնորհներն և վեհանձնութիւններն, և միւս կողմանէ հայ ազգին հաւատարմութեան անեղծանելի յատկութիւնը որչափ տրտմափիթ էր վերջին ատեներս մերայնոց մի քանի անխելահասից վերայ տեսնուիլն մի այնպիսի վարմունք, որ գլխովին հակապատկեր էին անշուշտ ազգին ընդհանրական ոգւոյն և բնաւորութեան իսկականին:

Կը յիշեք անշուշտ, երբ անցեալ տարի նոյն անվայել գործոց յանդըդ նողք արդարութեան ձեռքն ինկան, և ծանրապէս պիտի կրէին օրինաց

խստութիւնը, և ահա նորին կայսերական ԱԵՀամբոռութիւն իւր առ հպատակ հայ ազգն ունեցած անյեղլի սիրոյն և անդին համակրանաց նոր ապացոյց մը ևս տալու համար գթաց յանցաւորներուն վրայ և ներեց նոցա պատիժն իւր մեծ հոգւոյն յատուկ վեհանձն և գերազանցապէս ակնածելի անյիշաչարութեամբ, որով բազմաթիւ հարց, մարց, եղբարց, բարեկամաց և ազգականաց ողբ, լաց և արիւնարտասուք գաղրեցան։ Անդին էր կայսերական այս գթութիւն, անբաղդատելի էր այս առթիւ հայ ազգին հանրութեան վրայ ունեցած սիրոյն աստիճանը, ուստի յայնժամ՝ ծանուցանելով ամեն կողմ՝ այս շնորհին մեծութիւնը, յատուկ հեռագրովք հրամայեցաք եկեղեցեաց մէջ աղօթքներ առ Աստուած, վասն բարեբաստիկ կենդանութեան մեր ամենասիրելի ԱԵՀապետին, և անմոռաց յիշմամբ երախտագէտ մնալ առաջի մեծութեան կայսերական բարձր շնորհին։

Յետ այսպիսի ծանրակշիռ իրողութեան, սիրելի որդեակք իմ ի Քրիստոս, տարակոյս չկայ թէ արժան էր խրատուիլ զգաստ և արթուն գտնուիլ յանդիման որ և է անարժան թելադրութեանց, որ ազգին պատուօյն և հաստատեալ շահերուն կը սպառնան, և բացարձակապէս հրաժարիլ այնպիսի անվայել գործերէ. սակայն ցաւով սրտի կը լսուի, որ մի քանի անձինք գարձեալ նոյն վարմանց մէջ գտնուիլ կը յանդգնին, չեմ կընար ըմբռնել թէ այդպիսիք ի՞նչպէս չեն զգար յանդգնութեան ծանրութիւնը, որով ոչ միայն զբարկութիւն Աստուծոյ և զգատաստան կը հրաւիրեն իրենց վրայ անսատելով աստուածային յայտնի պատուիրանաց, որ կը հրամայեն հաւատարմութիւն անկեղծ և հպատակութիւն կատարեալ առաջի մարմնաւոր իշխանութեան, այլ և ազգին հանրութեան արդար սրտմտութիւնը, որ սկզբամբ հաւատարմութեան պարտուց կատարման մէջ կը մնառէ իւր աղդային խաղաղութիւնը և անդորրութիւնը, և ոչ թէ անարժան և անհետեական այնպիսի վարմանց մէջ, որ ազգովին զբաղմնուք և սրտի ցաւ լինելէ և իրենց վրայ յայտնի բարկութիւն աստուածային և խատութիւն օրինաւոր իշխանութեան հրաւիրելէ զատ՝ ուրիշ բնաւ հետեւանք չունի։ Մինչև ցեղը, սիրելիք, մինչև երբ այս յանդգնութիւն, մինչև ցեղը իրենցմով պիտի զբաղի Պատրիարքարանս, փոխանակ ներբին բարեկարգութեան և կրթական յառաջադիմութեան կարեոր ինդրովք զբաղելու։ Ընդգէր չեն յիշեր Ա. առաքելոյն յայտնի պատուիրանը որ կըսէ. «Ամենայն անձն որ լնդ իշխանութեամբ է, ի հնազանդութեան կայցէ, քանզի ոչ ուստիք է իշխանութիւն, եթէ ոչ յԱստուծոյ, և ոքք ենն՝ յԱստուծոյ կարգեալ են։ Այսուհետեւ որ հակառակ կայ իշխանութեան։ Աստուծոյ հրամանին հակառակ կայ, և ոքք հակառակն կան՝ անձանց գատաստանս ընդունին . . . զի Աստուծոյ պաշտօնեայ է քեզ ի բարիս . . . զի ոչ եթէ վայրապար ածեալ է սուսեր լնդ մէջ, Աստուծոյ սպասաւոր է վրէժինդիր

ի բարկութիւն այնմ, որ զչարն գործիցէ: Առան որոյ հարկ է հնազանգիլ՝ ոչ միայն վասն բարկութեանն, այլ և վասն խղճի մտացն ։ Հռոմ. ՓԿ. 1—6: Առաքելական այս պատուիրանը, մտածեցէք սիրելիք, թէ ինչ ծանրակշիռ սպառնալից ձեռվ կը բացատրուի: իշխանութեան անհնազանդը, կըսէ Ս. առաքեալը, ուղղակի Առտուծոյ անհնազանդ և հետեւապէս պատժոյ արժանի է, հարկ է հնազանդիլ և հպատակիլ իշխանութեան՝ ոչ միայն վասն զի կրնայ պատժել արդարապէս, այլ և սրտի անկեղծ և կատարեալ հաւանութեամբ: — ոչ մոռն չուն բույսունիւն ոչ և չուն նունի բույսուն, յայտնի է ուրեմն թէ տարրական այսպիսի պատուիրանի և ազգին իսկական օգտին հակառակ անվայել վարմունքներ բացարձակապէս գատապարտելի են:

Բայց ցաւալի է, որ այս յայտնի ճշմարտութեանց և ազգին յայտնի շահուց հակառակ գուրսերն ոմանք բացէն այլ և այլ թերթեր և յօդուածներ կը հրատարակեն և կաշխատին ներսէն իրենց անձնական շահուն գործիքներ ճարել, որով կարգ մը անխոհեմներ միամտարար խարուելով կը մղուին գործակցիլ այնպիսիաց, որ ազգին համար աշխատիլ կը ձեւանան, այլ իրականը բոլորովին ընդհակառակն է: Եթէ այսպիսի անխոհեմութեան թիւն և օրինակը շատնայ, տարակոյս չկայ որ ազգը պիտի տուժէ, յայնժամ փորձով պիտի տեսնենք վիճակնիս և պիտի զարմանանք այն դարուն առաքինութեան վրայ՝ յորում մեր հայրերն ի հնումն ազգին և եկեղեցւյ պահպանման համար հարկ եղած խոհեմութիւնն և խմատութիւնը ունեցած, և ընդհակառակն պիտի ամաչեմք այս դարուս լուսաւորութեան վրայ՝ յորում լուսաւոր մտօք և բաղմաճիւղ գիտութեանց արդիւնքովն պիտի կորսնցնեմք նախկին ժամանակաց մէջ մեր հայրերուն շահածները:

Ստոյգ է որ մի քանի անխելահաներու գործը ընդհանուր ազգին անմեղութեան համբաւը խնդրոյ տակ չկրնար գնել և մեր Օգոստափառ Ա.հ.հապետին հանրութեան վրայ ունեցած վստահութեան և համակրանաց աստիճանը մասնաւոր մարդոց երեսէն բնաւ չպակսիր, բայց սակայն այս ալ ստոյգ է, որ պարզ և միամիտ հասարակութեան առջև վտանդին ծուղակը միշտ լարուած մնալով՝ հետզհետէ գայթակղութիւն և գլորմունք կը յաճախեն, բազումք տարապարտուց կը վնասուին, ազգային վարչութեան գործելոյ շրջանակը կը նեղնայ, ընդհանրական խնդիրները երեսի վրայ մնալով՝ մասնաւորներով զբաղեալ կը պաշարուին, ի մի բան՝ թէն յանցաւորը մարդիկ ոմանք կը լլան: բայց նոցա յանցանաց և սխալանաց հետեւանքը ազգին յառաջադիմական ընթացից վրայ ծանրապէս կազդէ:

Աւստի կաղաչեմք սիրովն Յիսուսի Քրիստոսի, և կը յորդորեմ զամենեսեան, որ զգոյշ կենան և զմիմեանս զդուշացնեն: Առաջնորդաց վրայ

պարտք կը գնեմ: որ խրատեն և զգուշացնեն իրենց հօտն՝ քահանայից՝ որ խրատեն իրենց ժողովուրդն՝ ծնողաց՝ որ հսկեն իրենց զաւակաց ընթացքին վրայ, և առհասարակ բոլոր ժողովրդեան կը պատուիրեմ: որ մեր այս հայրական խրատուց ծանրակշութիւնն ըմբռնեն, և զգուշանան: Կը պատուիրեմ: այս ինչպէս երբեմն Ա. առաքեալն Պօղոս Թեսալոնիկեցի. հաւատացելոց պատուիրեց յասելն ։ Լսեմ զոմանց ի ձենջ թէ ստահակութեամբ գնան, գործ ինչ ոչ գործեն, այլ յուլացեալը հետաքրքիր շըրջին . . . եթէ ոք ոչ հնազանդեսցի բանիս մերց թղթովդ այդուիկ՝ դուք նշանակեսջիք զնա, և մի խառնակիջիք ընդ նմա զի պատկառեսցի . . Բ. Թես. 3. 11. 14:

Ա. առաքելոյն այս խօսքին համեմատ կը պատուիրեմ, սիրելիք, որ այսպիսի ստահակներէ զգուշանաք, և զգուշացնէք, և եթէ չեն զգուշանար, գուք մի հետեւիք իրենց, հեռացէք և մի գործակցիք, մի խառնակիջիք ընդ նոսա, կը պատուիրեմ որ հպատակութեան ու հաւատարմութեան պարտուց կարգի և կանոնի հակառակ վարմանց մէջ երբէք չը գտնուիք. այլ դրական ու իրական կեանքի պարկեցաւ սահմաններով աստուածաշտութեամբ, բարեկրթութեամբ և ամենայն քրիստոնէական առաքինութեամբ, ձեր միտքը, սիրտը և հոգին զարդարէք:

Խաղաղութեանց պարզեղն Քրիստոս տացէ ձեզ խաղաղութիւն յամենայն ժամ՝ և յամենայն իրս:

### Ողջ Երուբ

(Անկար Ա. Պատրիարքական Հայութ)

Տուեալ ի Պատրիարքարանի

Կ. Պոլսոյ յեօթն ամսեանն

Նոյեմբերի Յամի շնորհաց

1891 և Հայոց Ա.Յ.Խ

Թիւ 155

Կ. Պոլսիյ գրումեն արտասահմանի թերթերին յունի. 5 թուով հետեւալիները.

Նարականի և ուրիշ եկեղեցական մի քանի գիրքերու տպագրութիւնը արգելուեցաւ Վարչութենէն, որովհետեւ կառավարութիւնը կը սպահանջէ որ այդ գիրքերու մէջն վնասակար բառեր վերյուին և այնպէս տպագրուին:

— Անցեալ շարթու իւսկիւտարի Ա. Խաչ եկեղեցու և վարժա-